

Բարերախոսարար մաս մը բան պահ ձգած ըլլալով Հ. Ս. Երևմանի քով (որ մտադիր էր նուգնեակ հրատարակել զայն «Բագմավայ»-ի մեջ), Չարդարեան կրցած է յետոյ իր աւանդ վերատանայ և 1910 ին նուակ ուրեմն սկսիլ պրակ առ պրակ հրատարակութեանը պատկերագարդ այն շանեկան գործին (**Յիսուսակարան**) որ «Հայ երեսէյիներու կենսագրութիւնները, յուսանկարները, ձեռագիրները» կը բովանդակէ, զարդարուած մանաւանդ հին գիրքերէ և քերթերէ բազմաթիւ գեմկառիպ էջերով: «Յիշատակարան»-ի տպագրութիւնը կը շարունակուի դեռ, իր եղբորը՝ Պիմենի գործակցութեամբ: — Բաց աստի, երկուքինն մէկ ձեռնամուխ եղած են սպառած երկերու վերատպումի գործին և «Ազատ մատենաշար» տխորդով յոյս ընծայած քանի մը տասնեակ գիրքեր: — Վանան 1911 ին անցած է Երուսաղէմ, տպարանը կարգադրելու պաշտօնով: Վանքին գրացոյցակը պատրաստած ասուն, փոշիներու մեջ իբր անգլա նետուած բանկագին նմութիւն մը երևան հանած է, Գաղիկ բագաւորին կնոջ ու աղջկան պատկերը որ ապա մեծ աղմուկ հանեց Ռուսաստանէ մեջ և ուսումնասիրուեցաւ Գարեգին վրդ.է: Նոյն տարուին վերջերը Գահիրէ մեկնելով՝ հաստատուած է հոն իբր գրաւաճառ: Պատրաստած ունի եգիպտոսի գաղութին պատմութիւնը զոր մտադիր է ի մտոյ յոյս ընծայելու. ունի նաև «Հին օրեր», մուցուած գոնարներ» անուն գործ մը որ կը պարունակէ սիրուած գրագեաներէ **անցիպ** գրութիւններ, (Գուրեանէ 1, Պէշիքբաշլեանէ 2 անտիպ ոտանուոր, բազմաթիւ նաւակներ նոգելոյս երիման Հայրիկէ են.):

\* \* Հայ տպագրութեան պատմութեանը գրադոյններէն կան դեռ երկու հոգի ալ, ԱՅՐԱ-ՀԱՄ ԱՅՎԱԶԵԱՆՔ, ծն. 1846, մեռ. 1909, (պատկեր և կենսագրութիւն տե՛ս «Ամենուն Տարեցոյցը», 1910 տարի) որ իր **Շար հայ կենսագրութեանց** եռանասոր երկին մեջ Հայոց տըպագրական գործունէութիւնը նայեցուցած է՝ տարածուն, ճապաղ և անկապ մեքոտով մը: — Իսկ միւսն է կենսագիր-հրատարակագիր և Ազգ. երեսփոխան ԱՐՇԱԿ Ա. ԱԼՊՅԱՆՃԵԱՆՔ: Ծնած է Ալիտար, 17 Յունիս 1879 ին. նին. կրք. ստացած Պէրպերեան, յետոյ Կեդրոնական՝ աշակերտելով Հ. Ասատուրի: 1897 ին «Բիւզանդիոն»-ի մեջ երեւցած է իր Ա. յօդուածն՝ Ա. Ա. սկզբնատառերով. «Ամենայն Հայոց կարողիկոսութիւնը», յետոյ մասնակցած է Կեդրոնականի շուրջը յարուցուած խնդրոյն: Այնուհետեւ մնալուն աշխատակից «Բիւզանդիոն»-ի, սկսելով շարքն «Ամենտացոյ դեմքեր»-ու և զանազան բանասիրական յօդուածներու որոնցմէ կարեւորներէն յիշենք «Հայոց անմիարանութեան պատճառները», «Զօրութի Հայերը», «Կրք. յիսնամեակ մը», «Բանկալարի վերեզմանատունը» են.: Արշակ 3 տարի խմբագրողը եղած է Հիւանդանոցի «Բնդարձակ Օրացոյց»ներուն (1908-1910), որոնցմէ վերջինը շանեկան է յոյժ, 453 էջերով կուս. ամբիփումն ըլլալուն «Ազգ. Սանմանադրութեան» պատմութեան: Հեղինակած է «Սրբունի Տիւսար»-ի վրայ ուսումնասիրութիւն մը (1901 ին Վենետիկ տպ.), նաև ստուար կենսագրականները «Վ. Փանտան»-ի և «Արմենակ Հայկունի»-ի (վերջիններս դեռ անտիպ): Իր «Ռումելիի Հայերը» գործը 1907 ին պատկուած է Իզմիրեանց գր. մրցանակով: Աշխատակցած Հ. Ամսօրեայի, Ծաղիկի (Հայ եկեղ. երաժշտութիւնը), Սուրճանդակի (Յունաց պատրիարքութիւնը) և պօլսանայ պարբերականներու, երբեմն «Ս. Անգղեայ» և «Շուարշ» ծածկանուններով: — Աստեցմէ գատ, Ալպոյանեան 1912 տարույ «Կոչնակ» ամերիկանայ հանդէսին 2—5 րիւերուն մեջ հրատարակեց «Չարճարիւրամեակ Հայ Տպագրութեան» վերնագիրով յօդուած մը որ նարեւանցիկ ակնարկ մըն էր՝ նոյնին վրայ ձգուած:

\* \* Հոս կանգ կ'առնենք պահ մը, յիշատակելու համար քանի մը անձեր ալ որոնք ո՛չ նուազ ծառայութիւն մը մատուցած են Հայ Տպագրութեան պատմութեան մէկ ուրիշ հիւղին, նայ քերթերու ուսումնասիրութեան: 1. Հ. ՓԻԼԻՊՊՈՍ ՃԱՄՃԵԱՆ (Ազգ. լրագիրներուն ու օրագիրներուն պատմութիւնը, 1850 ին՝ «Եւրոպա» շարքարարքին մեջ, Վիեննա): 2. ՄԻՇՐԳԱՏԵԱՆՅ (1860 ին՝ «Փարիզ» հանդէսին մեջ, Բարիզ): 3. ՅԱՐՈՅ (1878 ին՝ «Հայոց Մամուլի Ռուսաստանում», Թիֆլիզ): 4. Հ. ԳՐԻԳՈՐԻՍ ԳԱԼԷԿԵԱՐԵԱՆ (1893 ին՝ «Պատմութիւն Հայ Լըրագրութեան», Վիեննա): 5. Զիւանի անգուգական աշուղին գաւաղը՝ ԳԱՐԵԳԻՆ ԼԵՒՈՆԵԱՆՅ (1895 ին՝ «Հայոց պարբերական մամուլը», Ալեքսանդրապոլ): 6. Հ. ՄԻՍԻՅ ՊՈՏՈՒՐԵԱՆ (1909 ին՝ «Հայ մամուլը 15 անրուան մեջ՝ 1894-1909», Վենետիկ): 7. ԱՐՍԷՆ-ՏԻՐԱՆ (1912 ին՝ **Ամերիկահայ Մամուլը**, Մուշեղ Ա.ի «Ամերիկանայ Տարեցոյցը»-ին մեջ, Պոսթըն:

